ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3056-Ա « 22 » հունիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ՀՈՎՆԱԹԱՆԻ ՓՈՂՈՑ Հ.81/3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՄ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արամ Արտավազդի Սարգսյանի (ծնված 19.03.1989թ.) դիմումը: Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Հովնաթանի փողոց հ.81/3 հասցեում գտնվող ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 554.5քմ, որից 300.0քմ մակերեսով հողամասը Արամ Արտավազդի Սարգսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 30.11.2023թ. հ.30112023-01-0169 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 11.10.2024թ. հ.ԱՏ-11102024-01-1342 և 15.01.2026թ. հ.ԱՏ-15012026-01-0435 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 11.05.2026թ. հ.20-Ել-6047 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Հովնաթանի փողոց հ.81/3 հասցեի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա, Հովնաթանի փողոց հ.81/3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արամ Արտավազդի Սարգսյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ մակերեսով հողամասին (որից 248.0քմ ընդհանուր բաժնային սեփականություն է Երևան քաղաքի Հովնաթան փողոց հ.81 հասցեի բաժնային սեփականատեր Դավիթ Սարգսյանի, իսկ 52.0քմ՝ Երևան քաղաքի Հովնաթան փողոց հ.81/1 հասցեի բաժնային սեփականատերեր Սամվել Գուլքանյանի, Սաթենիկ Հայրապետյանի, Հովնաթանի փողոց հ.81 հասցեի բաժնային սեփականատեր Դավիթ Սարգսյանի հետ) կից 254.5քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա

սեփականության իրավունքը 254.5քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Հովնաթանի փողոց հ.81/3 հասցեում գտնվող 554.5քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ